ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Յունիբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի
08.05.2007թ. N 24, ժամը 10:00
ք. Երևան

Մասնակցում էին
Ընկերության թվով 100 % ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի լիազոր ներկայացուցիչները.

Բանկի բաժնետերեր՝
1. Ժողովի նախագահ – «Յունիինվեստ» ՍՊԸ-ի /19.5%/ և «DEBBAN INVESTMENTS LIMITED» ընկերությունների /5%/ լիազորված անձ Գագիկ Զաքարյան – 24.5%
2. Ժողովի քարտուղար - «Էվանինվեստ» ՍՊԸ-ի լիազորված անձ Գ.Պիսկով – 25.5%
3. «Յունիաստրում Ասսետ Մենեջմենտ» ՍՊԸ լիազորված անձ - 50%

Հրավիրվածներ՝
1. ՀՀ կենտրոնական բանկից՝ Տ.Սարգսյանը
2. Խորհրդի անդամներ - Է. Ջամանյանը, Ս.Հայրիյանը
3. Վարչության նախագահ-գործադիր տնօրեն – Վ.Աբայանը
4. Վարչության նախագահի առաջին տեղակալ – Գ. Գրիգորյանը
5. Ներքին աուդիտի դեպարտամենտի տնօրեն - Ս.Գրիգորյանը
6. Գլխավոր հաշվապահ - Ա. Մալխասյանը
7. Վարչության նախագահի տեղակալ - Վարկավորման դեպարտամենտի տնօրեն - Ա.Ավագյանը
8. Վարչության նախագահի տեղակալ - Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն – Վ.Աղաջանյանը
9. Վարչության անդամ, Իրավաբանական դեպարտամենտի տնօրեն – Օ.Առաքելյանը
10. Իրավաբանական դեպարտամենտի Բանկի իրավական սպասարկման վարչության պետ – Լ. Եղիազարյանը
11. Պլաստիկ քարտերի դեպարտամենտի տնօրեն – Մ.Հակոբյանը
12. Տեղեկատվական դեպարտամենտի տնօրեն – Մ. Առաքելյանը
13. Գումազրի դեպարտամենտի տնօրեն - Ա.Գրիգորյանը

ՕՐԱԿԱՐԳ
1. Բանկի գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվության մասին - *զեկուցող՝ Վ.Աբայան*
2. Բանկի և մասնաճյուղերի 2006թ. ֆինանսական և հարկային հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների հաստատման մասին- *զեկուցող՝ Ա.Մալխասյան*
3. Բանկի Ներքին աուդիտի դեպարտամենտի հաշվետվության մասին - *զեկուցող՝ Ս.Գրիգորյան*
4. Խորհրդի քանակական կազմի հաստատման մասին - *զեկուցող՝ Լ. Եղիազարյան*
5. Շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման, տարեկան շահութաբաժինների չափի հաստատման և գլխավոր պահուստին հատկացում կատարելու մասին- *զեկուցող՝ Գ.Զաքարյան*
6. Բանկի արտաքին աուդիտոն անցկացնող անձի հաստատման մասին - *զեկուցող՝ Ա.Մալխասյան*

1. ԼՍԵՑԻՆ
Վ.Աբայանին 1-ին հարցի կապակցությամբ.
Ներկայացրեց, որ Յունիբանկը 2006 հաշվետու տարում պահպանել է հիմնական ցուցանիշների գծով աճի տեմպերը, կտրուկ զարգացում է արձանագրվել բանկային գործունեության մի շարք ոլորտներում՝ ամրապնդելով Բանկի դիրքը ՀՀ առաջատար բանկերի տասնյակում, առկա է Բանկում նոր ներդրումների ու ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու զգալի պահանջ՝ կապված տնտեսության կայունացման, գործարարության ակտիվացման և բանկերի հանդեպ ազգաբնակչության վստահության բարձրացման հետ:
Այնուհետև խոսքին՝ Արա Ավագյանին, Վարդան Աղաջանյանին, Մեսրոպ Հակոբյանին.

Յուրաքանչյուրը համապատասխանաբար ներկայացրեցին վարկային ներդրումների, հաճախորդների սպասարկման կազմակերպման աշխատանքների և օպերացիոն գործառնությունների, բարտային գործառնությունների վերաբերյալ 2006թ. ընթացքում իրենց ղեկավարի հաշվետվությունները և հեռանկարային զարգացման միտումները:
Վ. Աբայանը առաջակեց հավանություն տալ Վարչության հաշվետվությանը:

Քվեարկեցին.
կողմ - 100 ձայն
դեմ - 0
ձեռնպահ – 0

2. ԼՍԵՑԻՆ
Արման Մալխասյանին 2-րդ հարցի կապակցությամբ.
Ներկայացրեց, որ համաձայն Խորհրդի նախնական հաստատմանն արժանացած Բանկի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ կազմված արձանագրության, ինչպես նաև «Գրանտ Թորնթոն ԱՄԽՕ» միջազգային աուդիտորական կազմակերպության կողմից տրված «Յունիբանկ» ՓԲԸ 2006թ. ֆինանսական հաշվետվության, Բանկի

1. ակտիվները կազմել են 30983044 հազ. ՀՀ դրամ
2. պարտավորությունները՝ 27189606 հազ. ՀՀ դրամ
3. կապիտալը՝ 3793438 հազ. դրամ
4. տոկոսային եկամուտները կազմել են ընդամենը՝ 2693315 հազ. ՀՀ դրամ
5. տոկոսային ծախսերը կազմել են ընդամենը՝ 1049302 հազ. ՀՀ դրամ
6. զուտ տոկոսային եկամուտները կազմել են 1644013 հազ. ՀՀ դրամ
7. ոչ տոկոսային եկամուտները կազմել են ընդամենը 1052584 հազ. ՀՀ դրամ
8. ոչ տոկոսային ծախսերը կազմել են ընդամենը 1654305 հազ. ՀՀ դրամ
9. զուտ ոչ տոկոսային ծախսերը կազմել են 601721 հազ. ՀՀ դրամ
10. զուտ մասհանումները ընդամենը 502453 հազ. ՀՀ դրամ
11. շահույթը մինչև հարկվելը կազմել է 576513 հազ. ՀՀ դրամ
12. հետաձգված հարկային ակտիվները 29291 հազ. ՀՀ դրամ
13. զուտ շահույթը կազմել է 457681 հազ. ՀՀ դրամ գումար:

Բանկի դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ պարզվել է, որ 01.01.2006թ.-ից մինչև 31.12.2006թ.

1. Դրամական զուտ հոսքեր գործառնական գործունեությունից - 5598994 հազ. դրամ,
2. Դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից - 245108 հազ. ՀՀ դրամ
3. Արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա - 17337 հազ. դրամ,
4. դրամական միջոցների հոսքերի զուտ աճը կազմել է - 5957989 հազ. ՀՀ դրամ գումար:

Վերոհիշյալը հիմք ընդունելով՝ առաջարկեց հաստատել տարեկան հաշվետվություններն ու հաշվեկշիռը:

Քվեարկեցին.
կողմ - 100 ձայն
դեմ - 0
ձեռնպահ - 0

3. ԼՍԵՑԻՆ
Մ. Գրիգորյանին 3-րդ հարցի կապակցությամբ.
Ներկայացնելով 2006թ. ընթացքում ներքին աուդիտի կողմից իրականացված աշխատանքները, ներքին հսկողության համակարգի բարելավմանն ուղղված առաջնահերթ խնդիրները, ներքին աուդիտի դեպարտամենտի աշխատանքների կազմակերպչական խնդիրները, առաջարկեց հաստատել Ներքին աուդիտի դեպարտամենտի հաշվետվությունը:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

4. ԼՍԵՑԻՆ

Լ. Եղիազարյանին 4-րդ հարցի կապակցությամբ.

Ներկայացրեց «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքների պահանջները սույն հարցի կապակցությամբ, այնուհետև լսեցին՝

Գ.Զաքարյանին - առաջարկեց վաղաժամկետ դադարեցնել ՀՀ ԿԲ կողմից Բանկի Խորհրդի անդամի պաշտոնում դեռևս չգրանցված Արտաշես Կակոյանի լիազորությունները՝ հաշվի առնելով վերջինիս ներկայացրած դիմումը:

Հաշվի առնելով օրենքի այն պահանջը, որ Խորհրդի կազմում պետք է լինի նվազագույնը 5 անդամ, առաջարկեց 5-րդ անդամի ընտրությունը կատարել մինչև սույն թվականի հունիսի 1-ը արտահերթ ժողով գումարելու միջոցով:

Առաջարկեց Խորհրդի կազմը հաստատել հետևյալ կերպ՝ Գ. Զաքարյան, Գ.Պիսկով, Ս. Հայրիյան, Է.Զամանյան:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

5. ԼՍԵՑԻՆ

Գ.Զաքարյանին 5-րդ հարցի կապակցությամբ.

Առաջարկեց Բանկի ստացված ողջ շահույթը չբաշխել և թողնել Բանկի հեռանկարային զարգացմանը, իսկ հաշվի առնելով Բանկի կանոնադրության դրույթները՝ գլխավոր պահուստին հատկացնել զուտ շահույթի 5%:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

6. ԼՍԵՑԻՆ

Ա. Մայիսայանին 6-րդ հարցի կապակցությամբ.

Առաջարկեց հաշվի առնելով կայացած մրցույթի ամփոփված արդյունքները, ինչպես նաև հիմք ընդունելով Վարչության և Խորհրդի որոշումները, որպես Բանկի արտաքին աուդիտն իրականացնող միջազգային կազմակերպություն հաստատել «Գրանտ Թորնթոն ԱՍԻՕ» ընկերությանը:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

Ժողովի ընթացքում Բանկի բաժնետերերի ներկայացուցիչների կողմից բարձրացվեցին հարցադրումներ՝ ուղղված Բանկի տարբեր ղեկավարներին:

Գ. Զաքարյանի և Գ. Պիսկովի կողմից կատարվեցին հարցադրումներ ABN AMRO բանկի «Ռիսկերի կառավարման գործընթացների բարելավման ծրագրի» ընթացքի և ծրագրի ավարտից հետո ABN AMRO բանկի կողմից տրվող գնահատականը հավաստող փաստաթղթի վերաբերյալ:

Համառոտ հաշվետվությամբ հանդես եկավ և բարձրացված հարցադրումներին պատասխանեց Ծրագրի ղեկավար Լ. Եղիազարյանը:

Ծրագրի կարևորագույն դերն ու նշանակությունը ՀՀ բանկային համակարգում ընդգծեց նաև ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. Սարգսյանը:

Ժողովի վերջում ելույթ ունեցան Գ.Զաքարյանը և Գ.Պիսկովը, նշեցին Բանկում առկա որոշ թերություններ, մասնավորապես՝ 2006թ. վաճառքների ծրագրով նախատեսված պլանների թերի կատարման հետ: Նշեցին նաև, որ ցանկալի կլինի Յունիբանկը տեսնել ՀՀ բանկային համակարգի

առաջատարների եռյակում, որին հասնելու համար Բանկի Վարչությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները:

Բանկի Վարչությանը տրվեցին հանձնարարականներ Բանկի հեռանկարային զարգացման և տարեկան միջոցառումների ծրագրի և վաճառքների պլանների կատարման վերաբերյալ:

Քվեարկության և ելույթների արդյունքների հիման վրա
Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը միաձայն
ՈՐՈՇԵՑ

1. Հավանության արժանացնել Բանկի գործունեության վերաբերյալ 2006թ. Վարչության հաշվետվությանը:
2. Հաստատել 2006թ. Բանկի և մասնաճյուղերի տարեկան հաշվետվություններն ու հաշվեկշիռը:
3. Հաստատել 2006թ. Բանկի ներքին աուդիտի դեպարտամենտի հաշվետվությունը:
4. Ֆինանսական տարվա ընթացքում ստացված 457681 հազ. ՀՀ դրամ զուտ շահույթը չբաշխել, իսկ գլխավոր պահուստին հատկացնել զուտ շահույթի 5%:
5. Բանկի արտաքին աուդիտն իրականացնելու համար հայտարարված մրցույթի արդյունքները և ի նկատի ունենալով Բանկի Խորհրդի և Վարչության որոշումները հաղթող ճանաչել «Գրանտ Թորնթոն ԱՍԴՕ» միջազգային կազմակերպությանը և հաստատել նրան, որպես 2007թ. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձ:
6. Վաղաժամկետ դադարեցնել ՀՀ ԿԲ կողմից Բանկի Խորհրդի անդամի պաշտոնում դեռևս չգրանցված Արտաշես Կակոյանի լիազորությունները՝ հաշվի առնելով վերջինիս դիմումը: Խորհրդի 5-րդ անդամի ընտրությունը կատարել մինչև սույն թվականի հունիսի 1-ը արտահերթ ժողով գումարելու միջոցով: Խորհրդի կազմը հաստատել հետևյալ կերպ՝ Գ. Զաքարյան, Գ.Պիսկով, Ս. Հայրիյան, Է.Զամանյան:

Բանկի Վարչությանը տրվեցին հետևյալ հանձնարարականները.

7. Մինչև սույն թվականի հունիսի 1-ը նախապատրաստել և ներկայացնել Վարչության որոշում մասնաճյուղերի գործունեության վերլուծության և յուրաքանչյուր մասնաճյուղի տարեկան շահութաբերությունն ապահովող միջոցառումների ծրագիր:
8. Մինչև սույն թվականի հունիսի 1-ը մշակել Բանկի գլխամասում և մասնաճյուղերում հաճախորդներից Բանկի սպասարկման գնահատականի վերաբերյալ հետադարձ կապն ապահովող ընթացակարգ՝ կատարելով համապատասխան վերլուծություններ:
9. Անշեղորեն կատարել 2007թ. միջոցառումների ծրագրով սահմանված հանձնարարականները և վաճառքների պլանները:
10. Վերոհիշյալ հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Բանկի Վարչության նախագահին:

Նախագահ Գ. Տ. Զաքարյան

Քարտուղար Գ.Պիսկով